



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ նաև ՀՀ փաստաբանական դպրոց**) կառավարման խորհուրդը (**այսուհետ՝ խորհուրդ**)՝ մասնակցությամբ Խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Լեռնիկ Հովհաննիսյանի, Լյուդվիկ Դավթյանի, Նիկոլայ Հակոբյանի և Տիգրան Խուրշուդյանի,

ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 2-րդ ենթակետով՝ միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. **Հաստատել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի ունկնդիրների ուսման վարձի հետևյալ չափը՝**

- 1) ընդհանուր ընթացակարգով ուսուցման դեպքում՝ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ.
- 2) պարզեցված ընթացակարգով ուսուցման դեպքում՝ 550.000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ.
- 3) պարզեցված ընթացակարգով հատուկ դիմորդի ծրագրով ուսուցման դեպքում՝ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ.

17 նոյեմբերի 2021թ.

թիվ 7/6-L

ք. Երևան

- 4) հեռավար (առցանց, դիստանցիոն) եղանակով ընդհանուր ընթացակարգով ուսուցում անցնող Արցախի ունկնդիրների համար՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ.
- 5) հեռավար (առցանց, դիստանցիոն) եղանակով պարզեցված ընթացակարգով ուսուցում անցնող Արցախի ունկնդիրների համար՝ 275.000 (երկու հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ:

2. **Հաստատել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի ունկնդիրների ուսման վարձի վճարման կարգը՝ համաձայն հավելվածի:**

ՀՀ փաստաբանական դպրոցի
կառավարման խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

17 նոյեմբերի 2021թ.
թիվ 7/6-Լ
ք. Երևան